ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿԵՍԱՐԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

<<28 >> փետրվարի, 2020թ. *ԹԻՎ 10*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿԵՍԱՐԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 17-րդ հոդվածով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Կեսարիա համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 28-ի, N 4 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի :
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
Գալստյան Նորայր			
Դանիելյան Արմեն			
Ղանդիլյան Ռուբեն			
Քոչարյան Արման			
Գալինյան Նաթելլա			
Մաթևոսյան Մաթևոս			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԳԱԼՍՏՅԱՆ

2020 թվականի փետրվարի 28,
Նոր Կեսարիա համայնք

Հավելված

Արմավիրի մարզի Նոր Կեսարիա համայնքի

ավագանու 28.02.2020 թ.-ի

թիվ 10 որոշման

ՕՐԱԿԱՐԳ

1. Նոր Կեսարիա համայնքի ավագանու N4 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Կեսարիա համայնքի ինգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին:
3. Նոր Կեսարիա համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2020թվականի փետրվարի 28,

Նոր Կեսարիա համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿԵՍԱՐԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

<<28>> փետրվարի, 2020 թ. N11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿԵՍԱՐԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով, 82-րդ հոդվածով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Կեսարիա համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
Գալստյան Նորայր			
Դանիելյան Արմեն			
Ղանդիլյան Ռուբեն			
Քոչարյան Արման			
Գալինյան Նաթելլա			
Մաթևոսյան Մաթևոս			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ԳԱԼՍՏՅԱՆ

2020 թվականի փետրվարի 28,
Նոր Կեսարիա համայնք

Հավելված

Արմավիրի մարզի Նոր Կեսարիա
համայնքի ավագանու
28.02.2020թ. N 11 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԿԵՍԱՐԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ
2020 - 2024 ԹԹ
ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմել է՝ համայնքի ղեկավար Հ. Գալստյան _____

Հաստատվել է համայնքի ավագանու 28.02.2020 թիվ 11 որոշմամբ

Նոր Կեսարիա համայնք- 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3
1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ.....4
2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....5
3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ 14
4. ՀՋՀԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ.....18
5. ՀՋՀԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ.....18
6. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ.....22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը(այսուհետ ՀՀԶԾ) համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծություն և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

ՀՀԶԾ-ում ներառվում են համայնքի բոլոր պարտադիր խնդիրները և դրանց լուծման նպատակով նախատեսվող միջոցառումները: Միջոցառումները պետք է հստակ նկարագրված լինեն, իսկ նախատեսված արդյունքները՝ չափելի: Դրանց իրականացումը պետք է շարունակաբար մոնիթորինգի ենթարկվի, որպեսզի սահմանված թիրախներից շեղումների դեպքում հնարավոր լինի քայլեր ձեռնարկել միջոցառումներ պլանավորված հուն վերադարձնելու նպատակով: ՀՀԶԾ շրջանակներում իրականացված յուրաքանչյուր միջոցառում պետք է գնահատվի , որպեսզի բացահայտվեն թիրախային արդյունքներից հնարավոր շեղումների պատճառները, մշակվեն միջոցառումների իրականացման այլընտանքային տարբերակներ և հետագայի համար դասեր քաղվեն:

Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է , որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծություն և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատնման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը: Հնգամյա զարգացման ծրագրի մշակումը լուրջ աշխատանք է, որի կազմակերպմանն անհրաժեշտ է մոտենալ ամենայն պատասխանատվությամբ, կարևոր խնդիրներ են ծրագրի մշակման մեթոդական ցուցումների ապահովումը, ծրագրի առանձին բաժինների մշակման մեջ նեգրավված աշխատակիցների հրահանգավորումը, ծրագրի նախագծի ամփոփումն ու ավագանուն ներկայացնելը:

1.ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Ողջունում եմ Ձեզ՝ Արմավիրի մարզի Նոր Կեսարիա համայնքի բնակիչներին, ավագանուն, համայնքապետարանի և համայնքային ենթակա կառույցների աշխատակիցներին:

Շնորհակալություն Ձեզ, հնգամյա զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական բնական և մարդկային ռեսուրսների գնահատման նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերելու համար:

Նոր Կեսարիա համայնքի զարգացման հնգամյա ծրագրի կազմումը և կատարումը գերակա խնդիր է մեր համայնքում՝ միջնակարգ դպրոցում, մշակույթի տանը, բուժ-ամբուլատորիայում, փոստում և առևտրի սպասարկման օբյեկտներում:

Համայնքում 2020-2024թթ նախատեսվում է կատարել մի շարք կարևոր և հետևողական աշխատանքներ՝ դրանք են. փողոցների փոսալցում և ասֆալտապատում, մանկապարտեզի շենքի վերակառուցում և վերաբացում, ֆուտբոլի դաշտի բարեկարգում և ոռոգման ջրերի ներքին ցանցերի նորոգում:

Խիստ կարևորություն եմ տալիս գիտելիքներով զինված, համակողմանի զարգացած մատաղ սերնդի ձևավորմանը: Կցանկանամ , որ այս գիտակցումով առաջնորդվի մեր համայնքի դպրոցը, քանզի մատաղ սերնդին է վստահված մեր ներկան ու ապագան՝ մեր վաղվա պետական, քաղաքական, մշակույթային և հասարակական գործիչներին, կրթելու և հայեցի դաստիարակելու խնդիրը: Անհրաժեշտ է ապահովել այն գիտակցումը, որ այդ գիտելիքները պետք է ծառայեն ինչպես իրենց, այնպես էլ մեր ազգի ու հայրենիքի հզորացմանը:

Համայնքում պրոբլեմային խնդիրներն են համայնքի մշակույթի տան վերանորոգումը և գույքի համալրումը, դպրոցի շենքի ներքին հարդարման խնդիրները/ակնկալվում է պետական աջակցություն/, մանկապարտեզի շենքի կապիտալ վերանորոգումը և վերազինումը:

Ծրագրի մշակմանը, քննարկման ու հաստատման աշխատանքներին իրենց մասնակցությունն են բերում, ավագանու, համայնքապետարանի, դպրոցի, մշակույթի տան, փոստի, բուժ-ամբուլատորիայի և համայնքի անհատ քաղաքացիները: Նշեմ նաև, որ բացի ծրագրով նախատեսված աշխատանքների կատարումից համայնքապետարանը կարգավորում է տարվա ընթացքում ստեղծված խնդիրները՝ առաջնահերթության կարգով:

Շնորհակալություն:

Համայնքի ղեկավար՝ Հ.Գալստյան

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքը հիմնադրվել է 1949 թվականին: Նոր Կեսարիա համայնքը գտնվում է Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 16 կմ հվ- արմ, ծովի մակերևույթից 840 մ բարձրության վրա :

Եթերայուղային սովխոզ գործարանն զբաղվում է նաև պտղաբուծությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ:

Ունի միջնակարգ դպրոց , մշակույթի տուն , գրադարան , կապի բաժանմունք, բուժկենտրոն, գյուղում բարերարի միջոցներով կառուցվել է նաև եկեղեցի : Համայնքն ունի 270 ընտանիք, 1458 հա հողատարածք , համայնքը 71 տարեկան է :
Համայնքն ունի 1623 բնակիչ, այդ թվում՝

Աղյուսակ 1. Համայնքի մշտական բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները

Հ/Հ	Ցուցանիշները	Մարդ
1.	Բնակչության առկա թվաքանակը	1271
2.	Տնային տնտեսությունների թվաքանակը	270
2.1	այդ թվում՝ ժամանակավոր կացարաններում /վագոն, տնակ/ բնակվող	3
2.2	կիսակառույց տներում բնակվող	0
3.	Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների քանակը	28

Համայնքի բնակչության 52 % կազմում են տղամարդիկ և 48% կանայք: Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները

Հ/Հ	Ցուցանիշները	Ընդամենը	Կանայք	Տղամարդիկ
1.	Համայնքի բնակչության թիվը, այդ թվում՝	1623	787	836
	մինչև 1 տարեկան	25	10	15
	1-2 տարեկան	21	5	16
	3-4 տարեկան	41	22	19
	5-6 տարեկան	53	25	28
	7-10 տարեկան	102	48	54

	11-14 տարեկան	86	34	52
	15-17 տարեկան	59	33	26
	18 և ավելի տարեկան	1236	613	623
2.	Կենսաթոշակառուներ (ներառյալ հաշմանդամներ) այդ թվում՝	215	113	102
3.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	3	-	3
4.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	-	-	-
5.	Հաշմանդամ երեխաներ	-	-	-
6.	Խնամակալության հանձնված երեխաներ	-	-	-
7.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	-	-	-
8.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	38	-	38
9.	Հաշմանդամներ	3	-	3
10.	Զբաղվածներ /հողագործությամբ/	802	480	322
11.	Գործազուրկներ	600	273	327
12.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	28	22	6
13.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	8	-	8

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔԸ

1.Նոր Կեսարիա համայնքի վարչական տարածքը – 1430 հա

2. Վարելահողեր - 810.58 հա

3. Բազմամյա տնկարքներ - 103.33 հա

4. Այլ հողատեսքեր – 393.82

5. Դաշտային ճանապարհներ - 15.2 հա

6. Տնամերձ հողեր - 54.41 հա

7.Գերեզմանատուն - 2 հա

8.Դպրոց - 3.31 հա

9.Հուշարձանի տարածք - 1300 ք.մ

10. Գյուղամիջյան փողոցներ - 16 հա

11. Սեփականաշնորհված հողեր - 307 հա

12. Մեկ հողաբաժնի չափը - 0.5 հա

13 Հատուկ պահպանվող տարածքներ - 3.27 հա

14. Համայնքի սեփականության հողեր - 468.12 հա

2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

- Նոր Կեսարիա համայնքի 2020 թվականի ընդհանուր բյուջեն կազմել է 55103.1 հազար դրամ:
- Որի մեջ համայնքի սեփական եկամուտը կազմում է 45.6 %
- Համայնքում հիմնականում զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ :
- Գյուղատնտեսության ցուցանիշները

Գյուղատնտեսությունում հողատերերի թիվը, այդ թվում

Ա. Անհատական տնտեսություն 701 :

1. Գյուղարտադրանքի հիմնական տեսակների արտադրություն

Ա. Ցորեն
Բ. Գարի
Գ. Եգիպտացորեն
Դ. Չաման
Ե. Առվույտ
Զ. Բանջար բոստանային կուլտուրա
Է. Ծառապտուղ

2. Անասնապահություն

Ա. Կաթ
Բ . Միս

3. Ցանքատարածություններ

Ա. Հացահատիկ
Բ. Բոստան բանջար
Գ. Մրգատու ծառեր
Դ. Առվույտ

4. Անասնագլխաքանակ

Ա. Խոշոր եղջերավոր անասուններ , այդ թվում
Կովեր - 373 գլուխ
Բ. Մանր եղջերավոր անասուններ, այդ թվում
մայրեր 790

Գ. Խոզեր, այդ թվում
մայրեր 78
Դ. Թռչուններ , այդ թվում
հավեր 1884:

5.Գյուղատնտեսական տեխնիկաների և գործիքների քանակը

Մասնավոր սեփականություն

Թրթուրավոր տրակտոր 4 հատ :

Անիվավոր տրակտոր 36 հատ :

Հացահատիկային կոմբայն 1 հատ :

Խոտհնձիչ տրակտոր 5 հատ :

Բեռնատար ավտոմեքենա տարբեր մակնիշի – 25 հատ :

Տրակտորային կցասայլեր - 30 հատ :

Գութաններ - 12 հատ:

Շարքացան - 8 հատ:

Խոտ հավաքող մեքենա 12 հատ :

Պարարտանյութի ցրիչ - 4 հատ :

Այլ տեխնիկաներ - 8 հատ :

6. Տեղական ինքնակառավարման մարմիններ

Գյուղը կառավարվում է համայնքի ղեկավարի /համայնքապետի/ կողմից , որը ընտրվում է 5 տարին մեկ անգամ : Համայնքապետը ստեղծել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով

1. Տեղակալ - 1 դրույք ,
2. Աշխատակազմի քարտուղար - 1 դրույք ,
3. Գլխավոր հաշվապահ - 1 դրույք ,
4. Ֆինգործակալ - 1 դրույք ,
5. Գյուղմասնագետ - 1 դրույք ,
6. Կոմունալ բաժնի պետ – 1 դրույք ,
7. Սպորտի և երիտասարդության հարցերով մասնագետ - 1 դրույք ,
8. Օպերատոր - 1 դրույք

7. Համայնքի ենթակա կառույցներ

1. Մշակույթի տան տնօրեն - 1 դրույք ,
2. Մշակույթի տան պահակ - 1 դրույք ,

3. Հավաքարար - 1 դրույք

Գրադարան

1. Գրադարանավար - 1 դրույք :

Նոր Կեսարիա համայքի աշխատակազմի և ենթակա կառույցների ամբողջ ապարատը բաղկացած է 13 աշխատակիցներից :

Համայնքի ավագանին բաղկացած է 7 անդամից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Նոր Կեսարիա համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության որոշմամբ : Տնտեսական անկման հետևանքով համայնքի գույքի ֆիզիկական վիճակը վատթարացել է և գտնվում է ոչ բարվոք վիճակում:

ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքում բնակելի տների թիվը կազմում է 260 տուն , ընդհանուր մակերեսը 28 620 քառակուսի մետր , ոչ բնակելի մակերեսը 26 380 քառակուսի մետր , ընդհանուր մակերեսը 55 000 քառակուսի մետր:

Բնակարանի կարիք ունեցող ընտանիքների թիվը կազմում է մոտ 70 ընտանիք :

ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքում գործում է աղբահանության կենտրոնացված համակարգ , որը թույլ չի տալիս աղբը թափել համայնքի տարածքում:

Տարածաշրջանում կիսաչորային կլիմայի գերակայության պայմաններում ոռոգումը կատարվում է պոմպերի միջոցով:

ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի վարչական տարածքի փողոցներում տեղադրված են երթևեկության նշաններ՝ անհրաժեշտ կանոնակարգով:

Հիմնախնդիրներ՝ ներհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակ.

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի տարածքում գործում է 2 առևտրի կետ , որոնք հիմնականում զբաղվում են սննդի, ծխախոտի , ալկոհոլային խմիչքների և այլ ապրանքների վաճառքով : Խանութները հաշվառված են պետական հարկային մարմնում , ինչպես նաև եռամսյա կտրվածքով վճարում են համապատասխան տեղական տուրք համայնքի բյուջեին՝ գործունեության թույլտվության համար: Գյուղում կա նաև գործող 2 դեղատուն, որից մեկը անասնաբուժական: Համայնքում չկա կենցաղային սպասարկման և ծառայության ոչ մի օբյեկտ :

ԿՐԹՈՒԹՅԱՆ

Գյուղը ունի 1 միջնակարգ դպրոց՝ վերջին տարիները մասամբ վերանորոգված , ուր սովորում է մոտ 206 աշակերտ : Դպրոցն ունի 35 աշխատող:

ՄՇԱԿՈՒՅԹ , ՍՊՈՐՏ , ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ունի 1 մշակույթի տուն , որը մասնակի վերանորոգված վիճակում է : Գրադարանը գտնվում է մշակույթի տանը, գործող է , ունի 5000 միավոր գիրք: Մշակույթի տունը ունի մարզադահլիճ , որում գործում է պարի և K-1 քիք բոքսի խմբակներ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Գյուղում գործում է 1 ամբուլատորիա , որի շենքը գտնվում է մշակույթի տանը , գտնվում է բարվոք վիճակում : Բուժ-ամբուլատորիայում աշխատում է 2 բուժ աշխատող:

ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ

Նոր Կեսարիա համայնքն ունի հուշարձանին կից պուրակ, որտեղ ազատ ժամանակ իրենց հանգիստն են անցկացնում համայնքի բնակիչները:

ԷՆԵՐԳԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Նոր Կեսարիա համայնքի էներգահամակարգը կառավարվում է <<Մուսալեռ>> էլ.ցանցներ ընկերության կողմից:
Նոր Կեսարիա համայնքի գազամատակարարումը իրականացվում է Գազպրոմ – Արմենիա ընկերության կողմից:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

2016թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ Նոր Կեսարիա համայնքը ամբողջովին լուսավորված է արտաքին լուսավորությամբ:

2.3 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

Համայնքում իրականացվում են ծրագրեր համայնքապետարանի կողմից՝

1. մշակույթի տան վերանորոգում և վերազինում
2. Ներհամայնքային փողոցների ավազախճապատում և նորոգում
3. Մանկապարտեզի շենքի վերակառուցում և վերազինում

2.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Համայնքի բյուջեի մուտքերը, կարելի է ասել, ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հարկերի, տեղական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեծ մասը հիմնականում ձևավորվում են պետական բյուջեից համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվին (աղյուսակ 4):

Քանի որ համայնքի բյուջեի ֆոնդային մասում մուտքեր քիչ են կանխատեսվում, ապա պլանավորվող հինգ տարիների կապիտալ ծախսերը մեծամասամբ կիրականացվեն համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և դոնոր կազմակերպությունների հաշվին:

Աղյուսակ 3. Համայնքի 2018-2019թթ. բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2020-2024թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

հազար դրամ

Հ/հ	Մուտքերի անվանումը	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.	2023թ.	2024թ.
		փաստ.	փաստացի	կանխ.	կանխ.	կանխ.	կանխ.	կանխ.
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ	40000.5	45021.3	55103.1	56225.0	57575.0	58875.0	60175.0
1	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ							
1.1	Հողի հարկ	1935.7	3878.4	4952.0	5000.0	5100.0	5200.0	5300.0
1.2	Գույքահարկ շենք շինությունների և փոխադրամիջոցների համար	3123.6	3226.9	4548.4	4550.0	4600.0	4700.0	4800.0
1.3	Տեղական տուրքեր	31.8	29.8	160.0	160.0	160.0	160.0	160.0
1.4	**Գույքի վարձակալությունից եկամուտներ** Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	6242.5	8384.3	11580.6	11600.0	11800.0	11900.0	12000.0
2	**Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ/2.1+2.2/**							
2.1	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	26638.7	27140.1	29949.7	31000.0	32000.0	33000.0	34000.0
3	Տեղական վճար	1853.2	2196.8	3712.4	3715.0	3715.0	3715.0	3715.0
4	Այլ եկամուտներ	175.0	165.0	200.0	200.0	200.0	200.0	200.0